ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» մայիսի 2026թ. ՆՄՈ/561-Ա

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր հաշվապահ Շուշաննա Արթենյանի զեկուցագիրը և 2026 թվականի ընթացքում ձեռք բերված հիմնական միջոցների անվանումների և ապրանքանիշերի համադրում իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել «Պտղունքի Տիգրան Մեծի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր հաշվապահ Շ. Արթենյանին (համաձայնությամբ):
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (Ա. Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 29028401 79 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ • ՊԵՏԱԿԱՆ • 04447253

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի 24-ի
ՆՀՈ/561-Ա որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետ՝ Ա. Հակոբյան.

Աշխատանքային խմբի անդամներ՝
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, վարչության պետի պարտականությունները կատարող՝ Գ. Պետրոսյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար՝ Ռ. Երվանդյան.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ՝ Ա. Վասիլյան"

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ՝ Թ. Մկրտչյան:

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023